ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2026թ. թիվ 533-Ա

Ա.ՍԱՐԿԻՍՈՎԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և 16-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետով, հաշվի առնելով Ա.Սարկիսովի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արթուր Վագիֆի Սարկիսովին 2026 թվականի հուլիսի 24-ից ազատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից և լուծել նրա հետ 2026 թվականի ապրիլի 10-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Արթուր Սարկիսովի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4.1-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը ստորագրվելուց հետո երեք օրվա ընթացքում ծանուցել հասցեատիրոջը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, էլեկտրոնային փոստի կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-24 18:29:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 24
ք.Վանաձոր